

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~624~~

624-a

# ՄԱՐԿԱՆԵՐԻ ՍԻՍՏԵՄ



-185-

Ի. Ա. ՇԱԼՈՎ

---

ՀՐԱՏԱՐԱԿ.

1926

ՀԱՅԿՈՂՈՒՄԻ

---

# ԳՆԵՑԵՔ ՅԵԿ ՏԱՐԱԾԵՑԵՔ

# ՀԱՅԿՈՂԴՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

(Lonego k6 sbubl)

- |   |        |
|---|--------|
| <b>1.</b> Տիխոմիրով.—Ինչպես անել, վոր կոռակերատիվի<br>գործերը լավանան—զունավոր շապիկով, 32 յերես,<br>զինն ե (սպառված) . . . . . | • 0 կ. |
| <b>2.</b> Կոռակերատիվի առաջին քայլերը. զունավոր<br>շապիկով, 40 յերես զինն ե . . . . .   | 30 »   |
| <b>3. Պ. Քոլյան.</b> —Գյուղացի՝, ուժեղացրու կոռակե-<br>րացիան, 20 յերես, նկարազարդ շապիկով, զինն ե (սպառված) 5 »                |        |
| <b>4. Հ. Տ. Մ.</b> —Ինչպես պետք ելինի կոռակերա-<br>տիվի գործակատարը—22 յերես, նկարազարդ շապիկով<br>—զինն ե . . . . .            | 8 »    |
| <b>5.</b> Ինչպես պիտի հիմնել կոռակերատիվ խանութ<br>—24 յերես, զինն ե . . . . .  | 10 »   |
| <b>6. Պոժիտնով.</b> —Ինչպես պետք ելաշիվ տա սպա-<br>ռողական բնկերության վարչությունը—26 յերես,<br>զինն ե . . . . .               | 15 »   |
| <b>7. Պ. Քոլյան.</b> —Կորչեն չարչիներ—16 յերես,<br>պատկերազարդ, զինն ե . . . . .  | 8 »    |
| <b>8. ՇՏԵՒՆ.</b> —Մուրհակ—26 յերես, զիններ (սպառված) 30 »   |        |
| <b>9. Կերտենցեվ.</b> —Կաղմակերպիր ինքորթեզ—56<br>յերես, զինն ե (սպառված) . . . . .  | 35 »   |
| <b>10. Ոստովսկայա.</b> —Կոռակերացիան ինչու հա-<br>մար ե պետք զյուղացուն—զինն ե . . . . .  | 25 »   |
| <b>11. Դենիսով.</b> —Կաղմակերպեցեք խանութային<br>հանձնաժողովներ—զինն ե . . . . .  | 20 »   |


Պոլիեառեներ բոլոր յերկրների, միացե՛ք

Ի. Ա. ՇԱԼՈՎ

658.8

ԽԱՆՈՒԹԻ ԿԱՆԻՒ ՎԱՀԱՐԴԻ  
ՅԵՎ  
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՅԱԾՎԱՐՄԱ  
ՄԱՐԿԱՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

A 23348 ~~+5-398~~



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈԹԻ

1926 թ.

ՅԵՐԵՎԱՆ

---

Դրասեալար № 440(բ), Տիրաժ 500, Պատվեր № 3158  
Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Յերևան

---

# ՄԱՐԿԱՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խանութի կանխիկ վաճառքի հաշվառման հարցը, վորպես ստուգման մի յեղանակի հարց, սպառողական կոռպերացիացի գործնական կյանքում խիստ ուշագրավ ու շահագրգիռ խնդիր է:

Այդպիսի հաշվառման նպատակն ե՝ ճիշտ հաշվի առնել գործակատարի վաճառած ապրանքը և ապրանքի վաճառքից զանձապահի մոտ ստացված դրամը:

Սրանով հատկապես պետք է հետաքրքրվի վարչությունը. նա պետք է գիտենա, թե միջոցների և ուժի ինչպիսի նվազադույն գործադրումով հնարավոր է ճիշտ հաշվառման հասնել:

Այդ հարցով, ի հարկե, վոչ նվազ չափով շահագրգոված են նաև գործակատարն ու դանձապահը: Գործակատարը (հասկանալի ե, վոր պայմանագրով պատասխանատու) շահագրգոված ե նրանով, վոր գնորդներին վաճառած բոլոր ապրանքը նկատի առնվի իրը յելք, իսկ դանձապահը շահագրգոված է նրանով, վոր դրամարկղի մուտքը ճիշտ համապատասխանի գնորդներից իրոք ստացված գումարներին:

Այս պատճառով միանգամայն բնական ե, վոր կանխիկ վաճառքի հաշվառման յեղանակը կարևորագույն հարցերից մեկն ե հանդիսանում վոչ միայն վարչության համար, այլև ընկերության գործակատարի ու դանձապահի համար: Կանխիկ վաճառքի հաշվառման այն ձևը, վորն ուժերի և միջոցների գործադրման մտքով խնայող ե և ապահովում է հաշվառման ճշտությունը— նպաստում է նորմալ փոխհարաբերության հաստատվելուն՝ մի կողմից վարչության և մյուս կողմից՝ գործակատարի ու դանձապահի միջև: Գոյություն ունեն կանխիկ վաճառքի հաշվառման մի քանի ձևեր:

Բայց բոլորն ել հավասարաչափ պետքական չեն լիում յուրաքանչյուր ընկերության համար:

Ընկերությունները լինում են տարբեր որինակ՝ մանր, միջակ և ուժեղ: Շատերը խանութներում գանձապահ չեն ունենում, շատերն ունենում են, իսկ շատերն ել ապրանքը խանութում պահում են բաժիններով, ինչպես որինակ՝ մանուֆակտուրայի, մանրունքի, ամանեղենի, և յուրաքանչյուր բաժնում ունենում են պատասխանառու գործակատար և այլն: Այնուհետև՝ մի քանի ընկերություններում հաճախորդների թիվն որվա ընթացքում լինում ե ավելի համաչափ, մյուսներում դիցուք՝ առավոտյան սակավ, յերեկոյան ավելի շատ և այդպիսով՝ վոչ համաչափ: Նույնպես և հաճախորդները—ամեն տեղ միատեսակ չեն լինում, մի տեղ հաճախորդն իբր գնող մանր և, մյուսում՝ ինչոր:

Այդ բոլորից այս կամ այն չտիով կախված ենան հաշվառման ավելի համապատասխան ձևի ընտրությունը:

Փոքր կոռալերատիվ ընկերություններում սովորաբար հատուկ գանձապահ չի լինում. վաճառած ապրանքի դրամն ստանում ե ինքը՝ գործակատարը, ապրանքը բաց և թողնում նա և դրամն ել ստանում ե ինքը: Դա նօանակում ե, վոր վաճառած ապրանքի գումարը կարելի յէ հասվի առել միմիայն գործակատարի ստացած գրամք հասվելու միջոցով:

Այդ դեպքում միանգամայն անոգուտ ե՝ ստիպել գործակատարին, վոր նա որվա վաճառքը զրի առնե, վորովհետեւ այդպիսի դրությունները վարչության համար, միևնույն ե, ստուգման միջոց ծառայել չեն կարող: Գործակատարը կարող ե առանց վորեւ դիտավորության մոռանալ, զրի չառնել, մանավանդ գնորդների մեծ բազմության ժամանակ, կամ թե նա կարող ե հենց դիտավորյալ կերպով վաճառքը զրի չառնել և զերծապես նա կարող ե որվա վաճառքից իր կարիքների համար այսոր վերցնել զրամի մի մասը և հետազայում, ոռնիկը ստանալիս՝ տեղը դնել և այլն: Գործակատարի զրածներով վաճառքի գումարը մի դեպքում կարող ե սպակաս լինել, մյուս դեպքում՝ ավելի, քան նրա զրամարկում յեղած զրամի գումարը: Նմանապես և հաշվառման այլ ձևերը ներկա դեպքում նույնպես չեն կարող ստուգման միջոց ծառայել:

Նման դեպքերում ավելի նպատակահարմար ե վաճառքի հաշվառմը կատարել որվա առևտուրը վերջացնելուց հետո, վաճառած ապրանքից ստացած զրամը հաշվելով: Գործակատարի զրամարկում դանդաղ զրւմարը կկազմի որվա կանխիկ զրա-

մի գումարը, այսինքն որվա ընթացքում խանութից վաճառած ապրանքի գումարը։ Այդ հաշվելու ժամանակ սկսոք են ներկա գտնվի գանձտպահը, կամ վարչության կողմից խանութին հըսկող անդամը։

Հասկանալի յե, վոր նման ընկերությունները (այսինքն յերբ խանութը գանձապահ չունի) սկսոք են գործակատարի հետ պայման կապեն, վորով գործակատարը պատասխանատու կլինի իր ստացած ամբողջ ապրանքի համար։ Այդ գեղքում վոչ մի վտանգ չի լինի, թե գործակատարը վաճառքի մի ժամ իրեն կվերցնի, կամ վաճառած ապրանքի քանակն ավելի պակաս ցույց կտա, հաքնարկն է, վորովհետև այդպիսի զեղքում նույն չափով ելնրա ունեցած ապրանքը խանութում ավելի պակաս կլինի, իսկ պակասորդի համար նա պատասխանելու յե սկայմանազրով։

Յեթե նման գեղքերում գործակատարին հանձնարարվի ստանալու անդամներից այլ դրամներ (փայեր, մուտքի վճարներ և այլն), այն ժամանակ դրա համար ել նրան տրվելու յե անդորրագրերի գրքույկ, վորի արմատներով կարելի յե հաշվել նրա ստացած դրամների գումարը։ Վաճառքի գումարը վորոշելու համար (գրամը հաշվելիս)՝ անդորրագրով ստացած գումարը հանգում են գործակատարի դրամարկղում գտնված ամբողջ գումարից և մնացածը համարվում են վաճառած ապրանքի կանխիկ գումարը։

‘Եման գեղիքերում գործակատարի մոտ հավաքված գրամի ամենույն հաշվառման միջոցով միայն կարելի յե կատարել նիս ստուգում։’

Խանութում գտնածտպահ ունեցող սպառողական ընկերությունները կարող են խանութի կանխիկ վաճառքը հաշվառել՝ այերբակի չեկերի ոգնությամբ, վորոնց մեջ գրվում են միայն բաց թողնվածի գումարը, բ) նույն չեկերի ոգնությամբ, յերբ ապրանքը մանրամասնորին գրվում են, գ) դրամարկղային ապակարատի, հսկիչ դրամարկղի ոգնությամբ և դ) մարկաների սխտեմի ոգնությամբ։

Անդամների կանխիկ գնումները կարելի յե հաշվառել խանութային որագրերի կամ չեկերի ոգնությամբ (յերկու չեկերի, յերբ գանձտպահ չի լինում, յերբակի չեկերի, յերբ գանձտպահ կամ), վորոնց մեջ գրվում են անդամի անունը, ազգանունը և գնած ապրանքի գումարը։

Որագրերից կամ չեկերից վարչությունը տարեվերջում վորոշում են յուրաքանչյուր անդամի կատարած գնումների գումարը։

Այդ դեպքում ընկերություններից վոմանք իրենց անդամներին տալիս են գնումների գրքույկ, վորի մեջ գրվում ե անդամի գնումների գումարը—ընդհանուր գումարով կամ մանրամասն, միաժամանակ հիշատակելով այդ գնումներն որագրերի կամ չեկերի մեջ։

Սակայն անդամների կանխիկ գնումները կարելի յե հաշվառել նաև մարկաների սիստեմի ողնությամբ, տալով անդամին՝ նրա յուրաքանչյուր անգամ գնած գումարի չափով մարկաներ՝ վարչությանը պարբերաբար ներկայացնելու համար։ Իսկ վարչությունն այդ գումարներն իր հերթին մուծում ե անդամի հաշվեգրքույկի մեջ։


Հասկանալի յե, վոր հաշվառման տարբեր ձևերի գոյության դեպքում, վարչությունը պարտավոր ե նրանցից ընտրություն կատարել։ Ընտրելիս պետք ե նկատի առնել, թե հաշվառման վորպիսի ձևը կլինի ամենահեշտն իրականացնելու, ավելի խնայող լինելու համար, նրա վրա ավելի պակաս դրամ մսխելու՝ թե՛ ուժը նվազագույն սպառման իմաստով և թե՛ ամենաստոյգը՝ ճիշտ հաշվառման մոքով։ Մատնանշած ըոլոր ձևերն այդ տեսակետից իրարից տարբեր են։

Մենք այստեղ կանգ չենք առնելու հաշվառման ըոլոր ձևերի վրա և մանրամասն չենք բացատրելու, այլ կանգ կառնենք միայն մի ձևի վրա, վոր, մեր կարծիքով, ավելի գործնական և բոլոր տեսակետներից։ Այդ ձևը մարկաների սիստեմն ե։


## 2. ՄԱՐԿԱՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարկային սիստեմը կազմվում է մարկաներից, վորոնք զետեղված են լինում թիթեղյա ոռւլետի (անիվիկ) մեջ։ Մարկաները լինում են ժապավենանման և կոճի վրա փաթաթված։ յուրաքանչյուր ժապավեն ունենում է 1000 մարկա։ Մարկաների յուրաքանչյուր գլանն ունենում է իր հերթական համարագրությունը։

Համառուսական սպառողական ընկերությունների միությունն ե պատրաստում այդ մարկաները։ Կան զանազան արժեքների մարկաներ.—1 կոպեկանոց, 2, 3, 5, 10, 15, 20, 25, 50 կ., 1, 3 և 5 ըուրլիանոց։ Բոլոր տեսակի մարկաներն ել ունեն միևնույն նկարը։



Նկար 1. Ռուլետը մարկաներով փակ գրուրյամբ



Նկար 2. Ռուլետը մարկաներով բացված գրուրյամբ

Մարկաները գործադրելու համար պետք է ունենալ ոռուելեա, վորի մեջ մարկաները դասավորվում են իրենց արժեքների կարգով: Ծուլետը մարկաներով հանդերձ գտնվում է զանձապահի մոտ, իսկ մարկաների պաշտը՝ վարչության՝ գանձապահի մոտ: Ծուլետը փակվում է կողբեքով, վորի բալանին գտնվում է վարչության գանձապահի մոտ: Այդ պատճառով՝ առանց վարչության գանձապահի գիտության, գանձապահը չի կարող սպառված մարկաների փոխարեն նոր մարկաների գլան դնել:

### 3. ԱՊՐԱՆՔԻ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄԻ ՀԱՅ-ՎԱՐՈՒՄԸ

Ապրանքի կանխիկ վաճառքից ստացված դրամի հաշվառման համար պատրաստվում են հատուկ մարկաներ սպիտակ, թղթի վրա, «գրամարկղային» մակազրությամբ:

Մարկաների սիստեմի գործադրման դեպքում գնորդը դիմում ե գործակատարին, ջոկում ե կամ թվում ե ապրանքը՝ վորքան իրեն հարկավոր և: Գործակատարը նրան հաղորդում ե իր ուզած ապրանքի արժեքի ընդհանուր գումարը, վորպեսզի նա մուծի դրամը: Գանձապահն իր ստացած գումարի չափով կտրում ե ժապավեններից մարկաներ և տալիս ե գնորդին: Որինակ՝ գնումը կազմում է 89 կոպեկ, գանձապահը կտրում ե մի մարկա 50 կ, արժողությամբ և մյուսը՝ 25 կ, հետո 10 կ. և յերկու մարկա յել յուրաքանչյուրը 2 կոպեկանոց: Գնորդը ներկայացնում ե այդ մարկաները գործակատարին և նրանց փոխարեն ստանում ե ապրանքը:

Գնորդներից ստացած մարկաները գործակատարը հագցնում է մի յերկաթա ձողի կամ մեխի վրա:

Գործակատարն գնորդից ստանալով մարկաները, ստուգում է նշանց գումարը՝ իմանսուլու համար, թե արդյոք համապատասխանում ե գնորդի ներկայացրած մարկաների ընդհանուր գումարըն իր բաց թողնելիք ապրանքի գումարին, թե վոչ: Հակառակ դեպքում՝ գնորդը կարող է սխալմամբ, կամ թե դիտավորյալ կերպով, սահավանդ հաճախորդների մեծ բազմության ժամանակ, ավելի քիչ դրամ մուծել դրամարկղը և ավելի քիչ մարկաներ ներկայացնել գործակատարին, քան թե իր գնած ապրանքի արժեքն ե: Այդ կերպ, անշուշտ, գործակատարը կտուժի: Սովորաբ ամեն որվաւ վերջում հաշվում են խանութի կանխիկ վաճառքի գումարը: Մարկաների սիստեմի միջոցով խանութի կան-

Խիկ վաճառքի գումարի հաշվելը կատարվում է շատ ավելի հեշտ, արագ և ճիշտ։ Քանի վոր զլանի բոլոր մարկաները համարակալված են, ուստի և ստացված դրամը հաշվում են մարկաների համարներով, վորոնք նշանակվում են որպա սկզբում և վերջում։ Դա կատարվում է հատուկ տեղեկագրի ոգնությամբ № 50 ձևի բլանկի վրա, վորի նմուշն որինակներով բերվում է ստորև։

**Աղյուսակը և՛ս մյուս լեռնում.**

## ԲԱՑ ԹՈՂԱԾ ՄԱՐԿԱՆԵՐԻ

Մարդկանց մուժելի թղթի համար համարը	Մարդկանց մուժելի թղթի համարը	ին կիրակի		ին Յերկու- շաբթի		ին Յերեք- շաբթի	
		Մար- կան. № №	Գու- մար	Մար- կան. № №	Գու- մար	Մար- կան. № №	Գու- մար
1/2 կ.							
1 կ.	19001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	19318				
2 կ.	23001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	317	3	17		
3 կ.	11001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	23500				
4 կ.			500	10	—		
5 կ.	13001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	11519				
6 կ.			518	15	54		
10 կ.	27001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	13538			13911	04383
15 կ.	99001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	537	26	85	373	18
20 կ.	24001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	27336			65	472
25 կ.	20001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	335	33	50		23
50 կ.	18001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	09162				
1 ռ.	22001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	161	24	15		
2 ռ.	17001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	42140				
3 ռ.			139	27	80		
5 ռ.	26001	Մարկ. № № որավերջին բաց թողած մարկ. քան.	20155				
			154	38	50		
			18061				
			60	30			
			22015				
			14	14	—		
			17004				
			3	6	—		
			26003				
			2	10	—		
			239	51			
		Հնդամենը որվա ընթացքում					

## ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Հենց վոր մարկաներն սկսում են գործադրվել, ապա յուրաքանչյուր արժեքի մարկայի սեղբի համարը գրի և առնվում տեղեկագրի ձախ կողմից յերկրորդ՝ «Մարկաների ԱՆ սկզբից» սյունյակի մեջ։ Հետո որավերջում գրի յեւ առնվում ոռութեառում մնացած մարկաների հերթական համարը «Մարկաների ԱՆ»-ը տողամիջում և այն որվա տողամիջում, վոր որվա կանխիկ վաճառքը հարկավոր և վորոշել։ «Մարկաների ԱՆ» սյունյակում յուրաքանչյուր արժեքի դիմաց ունենք յերկու տողամեջ, վերեւմ գրվում է որվա ընթացքում բաց թողած մարկաների համարները, իսկ ներքեւմ՝ որվա ընթացքում բաց թողած մարկաների քանակը։

Մարկաների համարագրությունն սկսվում է ժապավենի դրսի ծայրից և վերջանում է գլանի վրա փաթաթած ներսի ծայրում։ Դրա համար ել որավերջում գտնված մարկայի համարից հանելով այդ իսկ որվա սկզբում ունեցած համարը, ստանում ենք որվա ընթացքում բաց թողած մարկաների քանակը, վորը և գրվում է տվյալ արժեքի դիմաց, ներքեսի տողամիջում։ Բաց թողած մարկաների քանակը գումարվում է իրենց արժեքի վրա և ստացվում է այդ արժեքի բաց թողած մարկաների գումարը, վորը գրվում է հետեւյալ սյունյակի «գումար» ի մեջ։ Այդպիս են վարվում յուրաքանչյուր արժեքի մարկաների հետ առանձին առանձին։ «Գումար»-ի սյունյակը հաշվում են և ընդհանուր գումարը կազմում է որվա կանխիկ վաճառքի գումարը, վորը գրվում է տեղեկագրի ներքեսի տողում։

Կարող ե պատահել, վոր որվա կեսում մի վորեե մարկայի գլանը սպառվի. այդ դեպքում նրա տեղը ոռութեառում դրվում է մի նոր գլան՝ նոր համարներով։ Դա չի փոփոխում կանխիկ վաճառքի հաշվառման կարգը։ Բանի վոր յուրաքանչյուր գլան ունենում է ճիշտ 1000 մարկա, ապա ուրեմն նոր գլանի համարները պետք է դիտել իրք հաջորդ հազարի համարներ, անգամ այն դեպքում, յերբ հենց նրանց համակագրությունը չի ունենա ընթացիկ համարներ։ Իսկ վորպեսզի ակներև գառնա այն, թե կատարված հազար համարի փոփոխությունը սխալ չե, որավերջում դրած նոր գլանի մարկայի համարն առաջին անգամ գրի առնելըն ընդգծվում է այնպես, ինչպիս վոր ցույց է տրված նախորդ յերեսում բերած որինակով, 5 կոպ. արժեքի մարկայի դիմաց։

Մարկաների հաշվառման տեղեկագրիրը գտնվում է գանձապահի մոտ, վորը պետք է վերը ցույց տված ձեռվ պահե մարկաների հաշիվը։

Մարկաների սիստեմի կիրառման ժամանակ միանգամայն ավելորդ և, վոր գործակատարն ամեն որ հաշվի գնորդներից

ստացած մարկաների գումարը։ Որվա ընթացքում ոռւլետից բաց թողած մարկաների հաշվելը տեղեկագրի ոգնությամբ, վերացնում է ամեն տեսակի կասկածը՝ ստույգ լինելու նկատմամբ։

Յենթագրենք, վոր բաց թողած մարկաների գումարը հաշվելիս գանձապահը սխալգում է, և տվագ գանձապահը որվա կանխիկ դրամը նրանից վերցնելիս՝ չի նկատում այդ սխալը։ Միևնույն են այդ սխալը կհայտնաբերվի այն որը, յերբ նոր զլանով պետք է փոխարինվի այն զլանը, վորի գումարը հաշվելիս բաց ե թողնվել սխալը։ Ահա թե ինչ ճանապարհով։ Հայտնի յի, վոր յուրաքանչյուր զլանում կա 1000 հատ մարկա։ Հետեւ պես, յեթե սպառված զլանը 5 կոպեկանոց արժեքի մարկաներից եր, ուրեմն նրա գումարը պետք է կազմեր ( $1000 \times 5 : 100$ ) 50 սուրլի։ Դիմենք տեղեկագրում բերված որինակին։ Յերեք որվա ընթացքում 5 կոպեկանոց մարկաներից գրված է իրը վաճառքի գումարը ընդամենը  $26,85 \times 18,65 \times 23,60 = 69$  ռ. 10 կոպ., այսինքն ավելի, քան պետք է կազմեր վողջ զլանը ( $69,10 - 50,00 = 19$  ռ. 10 կ.)։ Որինակից յերեսում ե, վոր վերջին որը զրված է նոր զլան և դրանից կտրված են 382 հատ մարկա, վորը կազմում է ձիշտ ( $382 \times 5 =$ ) 19 ռ. 10 կոպ., այդ պատճառով, յեթե տվյալ արժեքի կտրված մարկաների հաշվառման միջոցին սխալ է բաց թողած առաջին յերկու որը, միևնույն ե, այդ կնկատվի հետեւյալ որը, սպա ուրեմն՝ գործակատարը վոչնչով չի տուժի։

Բացի այդ, կարող է պատահել, վոր գործակատարի ստացած մարկաները ձողի կամ մեխի վրայից ընկնեն, կորչեն, այն ժամանակ նրա մոտ մնացած մարկաների գումարը չի համապատասխանի վաճառքից ստացած խեկան գումարին։

Դրա համար, յեթե գործակատարը որավերջում ցանկանար հաշվել իր մոտ յեղած մարկաները և նրանց գումարը մի վոր և պաաճառով չհամապատասխաներ ոռւլետից բաց թողած մարկաների ընդհանուր գումարին, ելի միևնույն ե, գործակատարի համար պարտավորեցուցիչ է այն գումարը, վորն ստացվում է ոռւլետից բաց թողած մարկաները հաշվելիս։

Այն ընկերություններում, վորոնց խանութում ապրանքը բաժինների յեւ վերածված և յուրաքանչյուր բաժնի համար ունեն պատասխանատու գործակատար ու տուանձին հաշիվ է պահվում, նրանց հաշվառման համար անհրաժեշտ է ունենալ յերկշեկերի ԿՐՊԵՅԿ՝ տարրեր գույնի թղթից կամ տարրեր ձեի։ Գրքույկները գտնվում են բաժիններում։ Բաժնի գործակատարը զրում է չեկը, տալիս է պնորդին և վերջինս ըստ այդ չեկի դրամը վճարում է գանձապահին և նրանից ստացած չեկը՝ «վճարվուծ է»

մակագրությամբ—վճարած գումարի մարկաների հետ միասին, ներկայացնում ե գործակատարին։ Գործակատարն այդ չեկերը և մարկաները հազցնում ե մի ձողի վրա։

Որավերջում յուրաքանչյուր բաժնի գործակատար հաշվում ե իր չեկերը և ստացած գումարը հաղորդում գանձապահին։ Վերջինս միացնում ե բոլոր գումարները և համեմատում ե բայթողած մարկաների ընդհանուր գումարի հետ։ Յերեան հանված տարածայնությունն այդ դեպքում պարզվում ե չեկերի կրկնաստուգմամբ և ծայրահեղ դեպքում՝ յուրաքանչյուր բաժնի մարկաները հաշվելու միջոցով։

#### 4. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԿԱՆԽԻԿ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱ-ՌՈՒՄԸ

Անդամների ապրանքային գնումների հաշվառման համար պատրաստվում են հատուկ մարկաներ, այսպես կոչված՝ «անդամակցական», գունավոր թղթից և տարբեր նկարով, վորը զանազանվում ե «դրամարկղային» մարկաների նկարից։

Անդամակցական մարկաները տեղավորում են առանձին ոռուետի մեջ և նույնպես գտնվում են գանձապահի մոտ, ինչպես և դրամարկղային մարկաները։ Այսպիսով գանձապահի մոտ լինում ե յերկու ոռուետ՝ մեկը «անդամակցական» մարկաներով, մյուսը՝ «դրամարկղային»։

Յերբ գանձապահն ընկերության անդամ—գնորդից դրամ և ստանում ապրանքի համար (այդ դեպքում անդամը ներկայացնում է իր հաշվեգրքույթի), նա պարտավոր է նրանից ստացած գումարի դիմաց գնորդին տալ «դրամարկղային» մարկաներ և միաժամանակ այդ իսկ գումարի չափ «անդամակցական» մարկաներ։

«Դրամարկղային» մարկաներն անդամ—գնորդը թողնում է գործակատարի մոտ իր ստացած ապրանքի փոխարեն, իսկ «անդամակցական» մարկաները պահում ե իր մոտ։

«Անդամակցական» մարկաներն ընկերության անդամը պահում ե իր մոտ այնքան, վոր մի զգալի գումար կազմի, 20—30 ռուբլի, կամ մինչև վոր ընկերության վարչությունը կպահանջի ներկայացնել այդ մարկաները զրասենյակին։ Այդ ժամանակ ընկերության անդամն այդ մարկաներն իր անդամակցական հաշվեգրքույթի հետ միասին ներկայացնում ե դրասենյակին։ Վերջինս հաշվում ե ներկայացրած մարկաների գումարը և գրում ե անդամի հաշվեգրքույթի մեջ ու միաժամանակ նույնը գրում ։

նաև ընկերության հաշվեգրքերի մեջ՝ անդամի անձնական հաշվում։

Անդամից վերցած և հաշված մարկաները վարչությունը այստեղ վոչնչացնում, և իսկ անդամի կատարած գնումների համար տվյալներ արդեն կան թե անդամի մոտ՝ նրա անդամակցական հաշվեգրքույկում և թե ընկ. գրքերում՝ անդամի անձնական հաշվում։

«Անդամակցական» մարկաների հաշվառումը գանձապահը կատարում է նույն յեղանակով, ինչ կարգով վոր «ղրամարկղային» մարկաներինը։ Միայ թե «անդամակցական» մարկաների համար նա ունենալու յե բաց թողած մարկաների հաշվառման տեղեկագիր։

Այդ ձևով պահելով անդամների կանխիկ գնումների հաշիվը, հնարավոր ե ամեն որ պարզել, թե ինչ գումարի ապրանք և վաճառված անդամներին և ինչ գումարի՝ կողմնակի գնորդներին։ Դա կատարվում է այսպես, մի որվա ընթացքում «անդամակցական» մարկաներից գոյացած ընդհանուր գումարը հանվում է «ղրամարկղի» մարկաների միևնույն որվա ընդհանուր գումարից։ Ստացված տարրերությունը կազմում է կողմնակի գնորդներին (վոչ—անդամներին) վաճառած ապրանքի գումարը։

Այն դեպքում, յերբ ընկերությունը խանութում չի ունի նույն գանձապահ, «անդամակցական» մարկաների ոռուետը գտնվում է գործակատարի մոտ և անդամներին վաճառած ապրանքի գումարը գործակատարը պարզում է բաց թողած մարկաների հաշվառման տեղեկագիրը լրացնելու միջոցով։

Այս դեպքում գործակատարն որվա վերջում նույն ձևով և հաշվում կողմնակիների կատարած առևտուրը, ինչպես և գանձապահը, այն ե՝ որվա կանխիկ ընդհանուր գումարից հանում է անդամների կատարած առևտուրը։ Այսպիսով ստացված գումարը կազմում է վոչ անդամներին վաճառած ապրանքի գումարը։

## 5. ՄԱՐԿԱՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆԴԵՊ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՅԼ ԶԵՎԵՐԻ

Խանութի կանխիկ վաճառքի հաշվառման չեկերի սիստեմը, հավասարապես և այլ ձևերը, պահանջում են, վոր ապրանքային յուրաքանչյուր բաց թողումը անպայմանորեն գրի առնվի։ Այդ գրանցումը պետք է կատարի կամ գործակատարը, կամ խանութային մի այլ աշխատակից։ Գրի առնելը յերբեմն կատարվում է միաժամանակ յերկու տեղում՝ անդամի գնումների գրքույկում

և որոգը ում, կամ չեկի մեջ։ Ինքն ըստ ինքյան պարզ է, վոր դա ժամանակ և խլում գործակատարից, կամ ավելորդ ծախսերի հետ և կապված։ պահանջվում առանձին աշխատակից և հաճախ զնորդների համար հերթ և ստեղծվում, առաջացնելով նրանց մեջ անբավականություն և տրտունջ։

Այսպիսով չեկի սխտեմն այս կամ այն ձեռվ արգելք և հանդիսանում ապրանքի բաշխման արագության և վորոշ դիպլքերում ել ավելացնում և ընկերության ծախսերը՝ խանութում ավելորդ աշխատակից ունենալու իմաստով։

Բացի այդ, չեկի սխտեմը գործադրելիս՝ շատ ժամանակ և սպառվում խանութի կանխիկ վաճառքը հաշվելու համար, մանավանդ կենդանի առետրի որերին, յերբ որական 200—300 ռ. և ավելի առետուր և լինում։ Ծառայողները, փոխանակ դնալու և հանգստանալու, յերբեմն խիստ լարված աշխատանքից հետո ստիպված են ուշանալու ելի  $\frac{1}{2}$  ժամով և ավելի՝ չեկերը հաշվելու համար։ Հաճախ այդ հաշվելը թողնվում է հաջորդ որվան և դրա պատճառվ ել հետ են մնում գրամարկղի և ապրանքային տեղեկությունները։

Հետո, յերբ չեկերը հաշվետարի ձեռքն և հասնում, նա պարտկանություն ունենալով ստուգել յուրաքանչյուր նախնական հաշիվ, պետք է նորից հաշվի այդ չեկերը, այսինքն պետք է գործադրի այնքան ժամանակ, վորքան վոր խանութի աշխատակիցները։

Մարկաների սխտեմն այդ թերությունները ունի։ Առետուրի ժամանակ կատարվող գրագրությունների վերացումն արագացնում և ապրանքի բաց թողումը գնորդներին և դրանով վերացնում և բաց թողման տեխնիկայի դեմք դժոհելու ըոլոր առեթները, կարծում ե չեկեր զրելու համար գործադրվելիք ժամանակը և նպաստում է գործակատարին ապրանքի բաց թողման մեծ կարողություն (նագրուղկա) ունենալուն, նույնպիս և վերացնում է չեկերը հաշվելու համար գործադրվելիք ժամանակը։

Կանխիկ վաճառքը մարկաներով հաշվառելը կատարվում է ավելի պարզ և արագ—վոչ ուշ, քան 10—15 րոպեյում և հաշվետարից չի պահանջվում, վոր նա մշտապես ստուգի գործակատարի աշխատանքը։

Դրամ մսխելու տեսակետից, մարկային սխտեմը զգալիութեն ավելի ձեռնտու յի, քան այլ ձեռնություններ։

Սաս բոլորից պարզ է, վոր մարկային սխտեմը, հաշվառման այլ ձեռնությունների համեմատությամբ ուշի մեծ առավելություններ։

## 6. ՄԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԹԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ

Առավելությունների հետ միասին մարկաների սիստեմը ունի և իր թերությունները, թեև շատ աննշան:

Անդամների գնումների հաշվառման համար մարկաների սիստեմի թերությունը, կամ ավելի ճիշտ՝ անհարմարությունն այն է, վոր յուրաքանչյուր անդամ պետք է մարկաները պահի իր տանը։ Մի քիչ անձշտապահ անդամները կարող են կորցնել մարկաները և զրկվել ընկերության խանութից կատարած իրենց գնումների լրիվ գումարն ապացուցելու հնարավորությունից։

Հ 23348Զեկի սիստեմով յուրաքանչյուր անդամի կատարած գնումների հաշվառումը կատարվում է վարչության գրասենյակում, իսկ մարկային սիստեմով՝ անդամներն իրենք են հոգում մարկաների պահպանման գործը, վորպեսզի կարողանան հաստատել իրենց գնումների լրիվ գումարը։ Այդ և մարկային սիստեմի միակ թերությունը և այն ել միայն անհատ անդամների տեսակետից։

Մինչդեռ՝ ընկերության համար անդամների կատարած գնումների հաշվառումը, հենց իրենց՝ անդամների կողմից համարվում է ամենաուղիղը, քանի վոր իրենք անդամները շահագրգոված են իրենց գնումների ճիշտ հաշվառմամբ, ուստի հենց նրանք ել պետք է հոգ տանեն, վոր ուղիղ հաշվառման յենթարկվեն իրենց գնումները։

Փորձն ապացուցել ե, վոր նման առարկությունները, մարկաների սիստեմի թերությունների դեմ՝ տեղի յեն ունենում գործի սկզբին, քանի դեռ անդամները չեն ընտելացած այդ սիստեմին։ Բայց հենց վոր նրանք յուրացնում են այն, այլևս ողբառուջներ չեն լսվում։

Իսկ խանութի կանխիկ վաճառքի հաշվառման թերությունները միայն այն ե, վոր գործակատարը ստանալով գնորդներից մարկաներ, պարտավոր է անպայմանորեն ստուգել նրանց գումարը, վորովհետեւ մարկաները միակ ապացույցն են բաց թողնվելիք ապրանքի արժեքը դրամարկղը մուծելու մասին։ Այլ կերպ՝ կարող ե պատահել, վոր գնորդները ավելի պակաս դրամ մուծեն, քան պետք է ապրանք ստանան և գործակատարի բաց թողած ապրանքի դիմաց, այդպիսով, ավելի պակաս գումարի մարկաներ կներկայացնեն։ Դրանից կտուժի գործակատարը և ընկերությունը։ Բայց այդպիսի ստուգում պահանջում են և մնացած սիստեմները, վորովհետեւ նրանցում ել

հնարավոր են ամեն տեսակի կեղծիքներ, վորոնք գործակատարից առևտուրի ժամանակ պահանջում են լարված ուշադրություն:

Մարկաների գործադրման ժամանակ ել հնարավոր են չարագործություններ, բայց այսուեղ ավելի հեշտ ե կանխել նրանց, քան այլ ձեռքում:

Չարագործությունները հնարավոր են հետեւյալ դեպքերում, յերբ —

1. Գնորդները հանձնում են գործակատարին այնպիսի մարկաներ, վոր վոչ թե խանութի դրամարկղիցն են ստացել, այլ մի կողմնակի աղբյուրից են ձեռք բերել:

2. Գանձապահը մարկաներ ե տալիս գնորդներին վոչ թե ոռվետում յեղած գլանից կտրելով, վորոնց հաշիվը պահպում է, այլ հաշվից դուրս յեղած գլաներից կտրելով:

Հետեւապես յերկու դեպքումն ել մարկաներն ի չարը գործադրող անձենք պետք ե ունենան մարկաների առանձին գլաններ. մի վորեւ տեղից ձեռք բերված:

Հարց ե ծագում, ի՞նչ սիջոցների պետք ե դիմել, վորպեսզի նման չարագործությունները կանխվեն:

## 7. Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ՄԱՐԿԱՆԵՐԻ Ի ԶԱՐԸ ԳՈՐԾ ԴՆԵԼԸ

Դրա համար շատ բարդ միջոցներ չեն պահանջվում: Վորովհետև գլաների վրա գտնվող մարկաները հերթական համարներ ունեն վոչ թե 1-ից սկսած մինչ 1000, այլ հնգանշան համարներ, որինակ՝ 10.000-ից մինչև 11.000, կամ 05.001-ից մինչ 06.000 և անպայման յուրաքանչյուր արժեքի ամեն սի նոր ժապավենն ունի, անշոշա, առանձին հերթական համարներ, ապա և նման չարագործությունների առաջն առնելը շատ հեշտ է: Գործակատարը պետք ե գնորդներից մարկաներն ստանալիս միայն հսկի նրանց համարներին:

Վորպեսզի այդպիսի հսկողությունը գործակատարից մեծ ուշադրություն և ժամանակ չի լի, անհրաժեշտ ե ունենալ վոչ թե մի ձող՝ մարկաները հաղցնելու համար, այլ մի տախտակի վրա ամբացրած մի շարք ձողեր (մեխեր), նայած գանձապահի ոռվետում յեղած մարկաների արժեքների թվին, այդ դեպքում յուրաքանչյուր արժեքի մարկաները հաղցվում են առանձին առանձին ձողերի վրա:

Գործակատարն ամեն առավոտ դեռ առևտուրը չսկսած, պետք ե արտագրի զանձապահի ոռվետում յեղած մարկաների համարներն ըստ արժեքների, և այդ համարների թուղթը պետք

Ե հազցնի մի այլ ձողի վրա՝ ամրող արվա ընթացքում իր աչքի առջև ունենալու համար։ Գնորդներից ստացած մարկաների համարները գործակատարը պետք է համեմատի իր թղթի վրա դրած համարների հետ և այդ միջոցով պետք է հսկի, թե վորուեղիցն են բերված մարկաները՝ գանձապահի ոռուետից, թե մի այլ տեղից։ Յեթե պատահի, վոր համարներն իրար չբռնեն, գործակատարը պետք է խոկույն կանգնեցնի գնորդին և պարզի, թե վորուեղից ե վերցրված այդ մարկան։ Յեթե յերեան հանվի, վոր մարկան կողմնակի ձեռվ և ձեռք բերված, այն դեպքում չարագործը պատասխանատվության և յենթարկվում ընդհանուր հիմունքներով։

Քանի վոր նման չարագործությունները հնարավոր են միայն թանգարժեք մարկաների նկատմամբ (եժանազինը կեղծելու սիրտ անող չի լինի), ուստի և գործակատարն ել պետք է իր ուշադրությունը դարձնի գլխավորապես թանգակին մարկաների վրա։

Բացի այդ, գործակատարը պարտավոր է պարբերաբար (շաբաթական մեկ, յերկու անգամ) ստուգել գնորդներից ստացած մարկաների գումարը, պարզելու, թե վորքան այն համապատասխանում և դանձապահի բաց թողած մարկաների հաշվին, և այդպիսով պետք է համոզվի, թե արդյոք կողմնակի մարկանը չեղնդունել։

Բարեխղճորեն հետեւելով, մատնանշած չարագործությունները կարելի յե ժամանակին նկատել։ Մինչդեռ չեկերի չարագործությունը (ուղղումները, տակից ավելացնելը, գումարի շտկումը և չեկի կեղծելը) ժամանակին կանխելը՝ բավականին դժվար է։

**Հետեվապես նաև այս տեսակետից մարկաների սիստեմը ունի առավելություններ իանդեպ չեկերի։**


Այսպիսով, ըստ վերը թված բոլոր հանգամանքների, մարկաների սիստեմը հանդիսանում է ամենաձեռնտու և կատարելագործված ձեռը, խանութի կանխիկ վաճառքը հաշվառելու և նմանապես անդամների գումարների հաշվառումը կատարելու համար։

## Տ Ե Կ Կ

### ՑԵՐԵՑ

1. Ընդհանուր դիտողություններ	3
2. Մարկաների սիստեմի նկարագրությունը	6
3. Ապրանքի կանխիկ վաճառքից ստացված դրամի հաշվառումը	8
4. Անդամների կատարած կանխիկ գնումների հաշվառումը	14
5. Մարկաների սիստեմի առաջելությունները հանդեպ հաշվառման այլ ձևերի	15
6. Մարկային սիստեմի թերի կողմերը	17
7. Ի՞նչպես կանխել մարկաների ի չարք գործ դնելը	18

- 12.** Արկով.—Գյուղը, տնտեսական նոր բաղա-  
րականությունն ու կոռպերացիան—զինն ե . . . . . 30 ₣.
- 13.** Ա. Վ. Մարտովսկի.—«Խավանվից». պիես 3  
գողծողությամբ—զինն ե . . . . . 15 »
- 14.** Ալով.—Վոջիլների դեմ կռվելու միջոցը. պիես  
3 գործողությամբ. 32 յերես, զինն ե . . . . . 25 »
- 15.** Գրեխով.—Ինչպես հավաքել փայտիճարները  
—24 յերես զինն ե . . . . . 15 »
- 16.** Դուծակատարի հասվառումը 28 յերես,  
զինն ե . . . . . 30 »
- 17.** Զայանով.—Կոռպերացիայի համառոտ դա-  
սընթց—80 յերես, զինն ե . . . . . 30 »
- 18.** Շալով.—Հաշվապահության համառոտ ձեռ-  
նարկ, 161 յերես, զինն ե . . . . . 2 n.
- 19.** Խիժնյակով.—Սովորեցեք քննություն կա-  
տարել—96 յերես զինն ե . . . . . 70 »
- 20.** Ակկոգուս.—Ինչպես պետք ե առելվուր  
անել—28 յերես, զինն ե . . . . . 25 »
- 21.** Ցինգովատով.—Ի՞նչ պետք ե խմանալ ընկե-  
րության կանոնադրությունից—32 յերես, զինն ե . . . . . 25 »
- 22.** Դեպի կոռպերացիա.—Հրահանգներ կա-  
նաց կոռպերացիայի մեջ զրավելու մասին, զինն ե . . . . . 15 »
- 23.** Մարկաների սիստեմը զինն ե . . . . . 35 »



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003704

A II  
23348

ԳԻՒՆ Ե 35 Կ.

064.